

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝**

**ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրություն հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար**

- 1. << Հոփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա >> ՊՈԱԿ-ի տնօրեն**
- 2. <<Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> ՊՈԱԿ-ի տնօրեն**
- 3. <<Զատիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> ՊՈԱԿ-ի տնօրեն՝**

Տնօրենի ընտրության (նշանակման) պարտադիր պայմաններն են՝

- 1) բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ (թերապիա), կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ,
- 2) առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ,
- 3) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
- 4) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,
- 5) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝ ա. ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, բ. անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման, գ. աշխատանքների բաշխման, դ. կարգապահական պատասխանատվության, ե. խրախուսանքի միջոցների կիրառման,
- 6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- 7) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ,
- 8) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում

Լրացուցիչ պայմաններն են՝

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- 2) ենթականների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

3) օտար լեզվի իմացություն

**Մրցույթը կկայանա 2017 թվականի սեպտեմբերի 6-ին՝**

**1. << Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա >> ՊՈԱԿ-ի տնօրեն  
ժ. 11<sup>00</sup> -ին:**

**2. <<Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝ ժ. 13<sup>00</sup> -ին:**

**3. <<Զատիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝ ժ. 15<sup>00</sup> -ին:**

**Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Վայոց ձորի մարզպետարան  
են ներկայացնում՝**

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև  
զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին  
կցագրման վկայականի) պատճենները.

6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական  
կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի  
օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և  
բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական,  
ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները,  
կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված  
առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ  
աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում  
կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից  
ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է  
բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման  
ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման  
ժամանակացույցի վերաբերյալ:

9. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝  
ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

**Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>00</sup> -12<sup>00</sup> , բացի շաբաթ և կիրակի  
օրերից:**

*Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2017 թվականի հուլիսի 24-ին.*

*Մրցույթը կկայանա Վայոց ձորի մարզպետարանի շենքում (ք.Եղեգնաձոր Շահումյան 5):  
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների,  
ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի  
մարզպետարանի աշխատակազմ (ք.Եղեգնաձոր Շահումյան 5, անձնակազմի  
կառավարման բաժին, հեռ.0281 2-55-95):*